## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱ-ՅԱՑՎԱԾ՝ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի՝ ՀՆ-2381, ՀՆ-2382, ՀՆ-2383, ՀՆ-2384 ԵՎ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-ի ՀՆ-151 ԴԻՄՈՒՄ-ՆԵՐԸ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Ուժը կորցրած ճանաչել «2001 թվականի հունիսի 11-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջեւ թմրանյութերի վերահսկման եւ իրավապաշտպանության բնագավառում նամակ-համաձայնագրում», «2005 թվականի հուլիսի 13-ին Երեւանում ստորագրված՝ «2001 թվականի հունիսի 11-ին կնքված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջեւ թմրադեղերի հսկողության եւ իրավունքի պաշտպանության նամակ-համաձայնագրում փոփոխություն կատարելու մասին» արձանագրության մեջ», «2004 թվականի մայիսի 19-ին Երեւանում ստորագրված՝ «2001 թվականի հունիսի 11-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջեւ թմրամիջոցների հսկողության եւ իրավապահ ոլորտում համագործակցության մասին» նամակ- համաձայնագրի լրացման մեջ», «2003 թվականի ապրիլի 14-ին Երեւանում ստորագրված՝ «2001 թվականի հունիսի 11-ին կնքված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջեւ թմրադեղերի հսկողության եւ իրավապահ ոլորտում համագործակցության մասին» նամակ-համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ» ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերով ընդունված՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի հունվարի 15-ի ՍԴԱՈ-3, ՍԴԱՈ-4, ՍԴԱՈ-5, ՍԴԱՈ-6 աշխատակարգային որոշումները:

2. ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմին՝ սահմանված կարգով վերադարձնել ՀՀ Նախագահի՝ 2008 թվականի դեկտեմբերի 29-ի ՀՆ-2381, ՀՆ-2382, ՀՆ-2383, ՀՆ-2384 եւ 2009 թվականի փետրվարի 3-ի ՀՆ-151 դիմումները:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

13 փետրվարի 2009 թվականի
ՍԴԱՈ - 10